

Հավելված

ՀՀ Կոնստիտուցիոն դրոշակագրության պաշտպանության պետական հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 402-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

Երևան 2011

Բովանդակություն

Ներածություն

- I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը,
- II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը,
- III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները,
III.1. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկները,
- IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ այլ դրույթներ:

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2012 թվականի տարեկան գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված նպատակի և Հանձնաժողովի 2010-2012 թվականների ռազմավարության ծրագրի իրականացման հրամայականի՝ ամրագրում է տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը, Հանձնաժողովի կողմից 2012 թվականի ընթացքում իրականացվելիք մրցակցային քաղաքականության գերակա ուղղությունները, առկա հիմնախնդիրների հիման վրա սահմանում է ապրանքային շուկաներում մրցակցության խթանման համար անհրաժեշտ միջոցառումները, արդի պայմաններում մրցակցության խրախուսմանն ու զարգացմանն ուղղված կարգավորման մեխանիզմները:

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Հայաստանի Հանրապետությունում մրցակցային քաղաքականության կիրարկումը վերջին տարիներին երկրի տնտեսության դինամիկ զարգացման հիմնական ուղղություններից են: Այժմ, Հայաստանի Հանրապետությունը գտնվում է սոցիալ-տնտեսական զարգացման որակապես նոր փուլում, առկա են երկրի տնտեսական զարգացման կայուն միտումներ, որոնք պայմանավորված են ինչպես մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների, այնպես էլ ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի և մրցակցային միջավայրի ձևավորմամբ:

Մրցակցային միջավայրի շարունակական ձևավորումը հանդիսանում է մակրոտնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներից, որը և բարենպաստ պայմաններ կապահովի բիզնեսի, ընկերությունների և շուկաների զարգացման և հասարակության պահանջների ամբողջական բավարարմանը: Ուստի, պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականությունը պետք է հենվի մրցակցության սկզբունքների վրա, որտեղ Հանձնաժողովի դերը գնալով աճում է՝ առաջին հերթին մրցակցային օրենսդրության դրույթների պահպանման գործում:

Վերջին տարիներին հանրապետությունում աշխատանքներ են տարվել մրցակցության համար բարենպաստ պայմանների ապահովման ուղղությամբ, գործարար միջավայրի բարելավման, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման գործում:

Տնտեսական մրցակցության ոլորտում որոշ առաջընթաց է արձանագրվել նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից գործարարների շրջանում իրականացված հարցումների հիման վրա կազմված 2011-2012 թվականների Գլոբալ մրցունակության զեկույցի շրջանակներում, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում աճել է հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության գործակիցը՝ 2.6-ից հասնելով 2.8 մակարդակի: Հարկ է նշել, որ այս բարելավումը վերջին երեք տարիների ընթացքում առաջին անգամ է արձանագրվել:

Տնտեսության զարգացման, ինչպես նաև ազատ մրցակցության ապահովման հիմնական գործոններից է հանդիսանում փոքր և միջին ձեռնարկատիրության խթանումը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գրանցված են 155 հազար ընկերություններ, որոնցից 86 հազարը հանդիսանում են մանր գործարարությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտներ, փոքր և միջին բիզնեսին բաժին է ընկնում մոտ 6300 տնտեսվարող սուբյեկտ:

Մրցակցության զարգացումը համալիր խնդիր է, որի լուծման համար պատասխանատու են նաև այլ պետական մարմինները, որոնց գործունեությունը հիմնվում է մրցակցային քաղաքականության նպատակների և խնդիրների վրա:

Հանձնաժողովի կողմից ձեռնարկվող միջոցառումները հիմնված են ապրանքային շուկաների վերլուծության վրա: Այսպես, Հանձնաժողովը 2011 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում ուսումնասիրել է թվով 13 ապրանքային շուկաներ, որոնցից 9-ը պարենային ապրանքային շուկաներ են և 4-ը ոչ պարենային ապրանքային շուկաներ:

Ուսումնասիրված պարենային ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտները և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ 1

Հ/Հ	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրված ժամանակահատվածը	Առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի		Միջին շուկայի մասնակիցների թիվը	Կենտրոնացվածության աստիճանը****	
			անվանումը	բաժինը (%)		Մակրոստ	Միոստրուկտուր
1	«Հավի ձու՝ կճեպով»	2010թ. 4-րդ եռ.	«Արաքս թոշնաբուծական ֆաբրիկա» ՓԲԸ***	30.0	6	86.0	բարձր
			«Երևանի թոշնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ***				
			«Լուսակերտի ՏԹՖ» ՍՊԸ***	29.0			
			«Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ***	27.0			
2	«Արդյունաբերական վերամշակման նպատակով ձեռքբերվող լոլիկ»	2010թ.	«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ**	62.6	11	96.7	բարձր
			«ՄԱՊ» ՓԲԸ**	30.3			
			«Եվրոթերմ» ՓԲԸ	3.8			
3	«Սուրճի հիմքով պատրաստի արտադրանք»	2010թ. 1-ին կիս.	Ա.Բաղդասարյան անհատ ձեռներեց*	81.2	19	84.0	բարձր
			«Վենդա» ՍՊԸ	1.75			
			«Մարսերալ» ՍՊԸ	1.0			
4	«Լուծվող սուրճ»	2010թ. 1-ին կիս.	«Մոկոնաթ» ՍՊԸ***	48.1	15	85.9	բարձր
			«Նյու Ֆորս» ՍՊԸ***	30.3			
			«Մարսերալ» ՍՊԸ***	7.5			
5	«Հատիկավոր սուրճ»	2010թ. 1-ին եռ.	«Կաֆե դյու Բրազիլ»***	63.64	9	85.7	բարձր
			«Գրանդ Քենդի» ՀՁ ՍՊԸ***	12.55			
			«Վիվա Առգո» ՍՊԸ***	9.47			
6	«Աղացած սուրճ»	2010թ. 1-ին եռ.	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ***	37.3	9	75.8	բարձր
			«Արմեն Համիկ» ՀՁ ՍՊԸ***	19.88			
			«Ռոյալ Արմենիա» ՀՁ ՍՊԸ***	18.57			
7	«Արդյունահանված հանքային ջուր»	2010թ. հունվար 01-սեպտ.30	«Ադամանդ Կ» ՍՊԸ**	74.08	3	100.0	բարձր
			«Վի ընդ Էյ Տուր» ՍՊԸ**	18.7			
			«Վայոդ Ձոր» ՍՊԸ	7.22			
8	«Շշալցված աղբյուրի ջուր»	2010թ. հունվար 01-սեպտ.30	«ՄԳԱ Վոթըր» ՍՊԸ*	35.4	37	60.5	միջին
			«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ	13.6			
			«Էվրի դեյ» ՓԲԸ	11.5			
9	«Շշալցված հանքային ջուր»	2010թ. հունվար 01-սեպտ.30	«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ***	35.7	37	75.1	բարձր
			«Ջերմուկ Մայր Գործարան» ՓԲԸ***	31.1			
			«Բյուրակն» ՍՊԸ***	8.3			

*տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի առնվազն մեկ երրորդը:

** տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը:

*** տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երկրորդը:

**** Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե $70\% < CR-3 < 100\%$, միջին աստիճան՝ եթե $45\% < CR-3 < 70\%$, ցածր աստիճան՝ եթե $CR-3 < 45\%$: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

Ուսումնասիրված ոչ պարենային ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտները և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ2

Հ/Հ	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրված ժամանակահատվածը	Առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի		Միջին շուկայի մասնա կիցների թիվը	Կենտրոնացվածության աստիճանը****	
			անվանումը	բաժինը (%)		տոկոսը	աստիճանը
1	«Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)»	2011թ. 1-ին եռ	«Քեթրին Գրուպ» ՍՊԸ***	30.0	11	76.0	բարձր
			«Ագրիմատկո Արմենիա» ՍՊԸ***	24.0			
			«Մասիսի բերրիություն» ՍՊԸ***	22.0			
2	«Ամրան»	2010թ. հունվար - հուլիս	«Միկմետալ» ՓԲԸ***	46.0	5	94.5	բարձր
			«Եվրոպա» ՍՊԸ***	41.4			
			«Մետեքս» ՓԲԸ***	7.1			
3	«Ամրալար»	2010թ. հունվար - հուլիս	«Միկմետալ» ՓԲԸ***	41.7	15	85.9	բարձր
			«Եվրոպա» ՍՊԸ***	37.3			
			«Մետեքս» ՓԲԸ***	6.9			
4	«Գաջ»	2010թ. հունվար - սեպտ.	«Գաջ» ՓԲԸ**	50.26	3	100.0	բարձր
			«Գաջեգործ» ՓԲԸ**	49.63			
			«Վառնաշ» ՓԲԸ	0.11			

*տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի առնվազն մեկ երրորդը:

** տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը:

*** տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երկրորդը:

**** Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70%<CR-3<100%, միջին աստիճան՝ եթե 45%<CR-3<70%, ցածր աստիճան՝ եթե CR-3<45%: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

Հարկ է նշել, որ ուսումնասիրված 13 ապրանքային շուկաներից միայն մեկն է միջին կենտրոնացված, իսկ մնացած 12-ը բարձր կենտրոնացված են:

Հանձնաժողովի կողմից գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների առկայությամբ շուկաներից 46 պարենային ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող են ճանաչվել 52 տնտեսվարող սուբյեկտ, 70 ոչ պարենային ապրանքային (ծառայությունների) շուկաներում՝ 43 տնտեսվարող սուբյեկտ և 15 դեղերի շուկաներում՝ 10 տնտեսվարող սուբյեկտ: Հանձնաժողովի կողմից համաձայն նոր օրենսդրության գերիշխող դիրք ունեցող են ճանաչվել 7 պարենային ապրանքների առևտրային ցանցեր, 5 բենզալցակայանների ցանցեր, 9 դեղատների ցանցեր: Վերը նշված տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ իրականացվում է

մշտական հսկողություն վերջիններիս կողմից մրցակցության օրենսդրության խախտումների կանխարգելման և դադարեցման ուղղությամբ:

Գների դիտանցումը հանդիսանում է Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաներում գների շարժին հետևելու լծակ, ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից հնարավոր խախտումների, ինչպես նաև հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման միջոց: Դիտարկվող ապրանքային շուկաներում վաճառքի իրական գների բացահայտման նպատակով Հանձնաժողովի կողմից իրականացվում են նաև հսկիչ գնումներ, որոնց արդյունքներն օգտագործվում են ուսումնասիրությունների հետագա ընթացքի ապահովման նպատակով:

Որոշ դեպքերում գների աճը պայմանավորված է օբյեկտիվ գործոններով և, առաջին հերթին, համաշխարհային շուկայում նրանց մակարդակից, սակայն, միևնույն ժամանակ գների արհեստական աճ է տեղի ունենում նաև շուկայի մասնակիցների հակամրցակցային գործողությունների արդյունքում, մասնավորապես, գնային համաձայնություններով, որը իրականում խնդիր է հանդիսանում մրցակցության զարգացման և մրցակցային միջավայրի ձևավորման համար:

Նման օրինակներից է Հանձնաժողովի կողմից բեռնափոխադրումների ոլորտում իրականացված վարույթը: Համաձայն մամուլի հրապարակումների, բեռնափոխադրումների ծառայություններ իրականացնող 4 տնտեսվարող սուբյեկտներ բարձրացրել էին Թուրքիայից և Չինաստանից ներկրվող ապրանքների համար առևտրականներից գանձվող վճարի չափը: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական պարզաբանման համաձայն Թուրքիայից և Չինաստանից ներկրվող ապրանքների դիմաց գանձվող մաքսավճարների չափի փոփոխություն չէր եղել: Հանձնաժողովը շուկայում գործող 4 տնտեսվարողներից պահանջել էր գների բարձրացման պատճառները և հիմնավորումները: Ըստ տնտեսվարողների, գների բարձրացումը կապված էր ծախսերի ավելացման հետ:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովը պարզեց, որ բեռնափոխադրողների կողմից հունվարին տեղի է ունեցել գների միաժամանակյա բարձրացում առանց որևէ տնտեսական

հիմնավորման: Հանձնաժողովն ամրագրեց, որ փոխադարձ ներքին համաձայնությամբ 4 տնտեսվարողները միևնույն պատճառաբանությամբ անհիմն կերպով բարձրացրել էին իրենց ծառայության արժեքը և կամայական գին են սահմանել: Հակամրցակցային համաձայնություն կնքելու համար նշված չորս ընկերությունների նկատմամբ նշանակվել է տուգանք ընդհանուր հարյուր միլիոն դրամի չափով:

Արդի պայմաններում բարձր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում գործող և գերիշխող կամ մենաշնորհ դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության վերահսկումը ունի ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական նշանակություն: Նման հսկողության միջոցով Հանձնաժողովը նպատակ ունի տնտեսվարող սուբյեկտների գործունեությունն ուղղորդել շուկայական տնտեսության կանոնների պահպանմանը: Հանձնաժողովը շարունակելու է իրականացնել մրցակցության օրենսդրության տեսանկյունից մենաշնորհ կամ օլիգոպոլ տիպի ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի, այդ թվում գնագոյացման վերահսկողություն՝ այդպիսով հնարավորություն ստեղծելով կանխել գերիշխող (մենաշնորհ) դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից հնարավոր չարաշահումները: Այդպիսի խախտումների կանխումը և արգելումը Հանձնաժողովի կարևոր գործառույթներից է:

Մասնավորապես, Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել ազդտական պարարտանյութերի շուկայում, որի արդյունքում պարզվել է, որ 2011 թվականի առաջին եռամսյակի տվյալներով ազդտական պարարտանյութի շուկայում գերիշխող դիրք ունեցող են ճանաչվել՝ «Քեթրին գրուպ» ընկերությունը՝ 30 տոկոս, «Ագրիմատկո Արմենիա» ընկերությունը՝ 24 տոկոս և «Մասիսի բերրիություն» ընկերությունը՝ 22 տոկոս մասնաբաժիններով, միասին գրավելով շուկայի երկու երրորդից ավելին: Նշված տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման առկայությունը պարզելու նպատակով՝ արտահայտված չհիմնավորված գնի սահմանմամբ, Հանձնաժողովը ուսումնասիրել է նրանց վարքագիծը: Դիտանցման արդյունքում պարզվել է, որ պարարտանյութի մանրածախ առևտրի մի շարք կետերում 1 պարկի դիմաց գինը մոտ 1.8 անգամ գերազանցում էր ձեռքբերման գնին:

Ընդ որում, իրականացված վարչական վարույթի շրջանակներում տնտեսվարող սուբյեկտները պարտավորվեցին 1 պարկ պարարտանյութն իրացնել 7 հազար դրամը չգերազանցող գնով: Հանձնաժողովը հետամուտ էր և վերահսկում էր այս ոլորտը, ներկրողների կողմից խտրական և տարբերակված գնային քաղաքականության կիրառումն կանխելու նպատակով: Դրա հետ մեկտեղ, մամլո հաղորդագրությունների արդյունքում հանրապետության գյուղական համայնքներում պարարտանյութի վաճառքի գնային չարաշահման հետ կապված բնակիչներին զգուշացվել էր, որ իրենք ևս կարող էին ահազանգել Հանձնաժողովի թեժ գծին:

2011 թվականին Հանձնաժողովն իրականացրել է վարչական վարույթ, որը վերաբերում էր գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի կողմից արհեստական դեֆիցիտի ստեղծմանը: Այն ևս հանդիսանում է առանձնահատուկ հիմնախնդիր՝ լուրջ տնտեսական և սոցիալական հետևանքներով: Այսպես, Հայաստանի Հանրապետության առևտրի կետերում դեռևս 2010 թվականի դեկտեմբերին արձանագրված ձվի դեֆիցիտի և իրացման գների կտրուկ բարձրացման առնչությամբ Հանձնաժողովը լայնածավալ ուսումնասիրություններ էր սկսել հավի ձվի շուկայում: Ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովը տեղեկատվություն էր պահանջել ձվի շուկայում գործող առավել մեծ իրացման ծավալներ ունեցող վեց տնտեսվարող սուբյեկտներից: Համաձայն վերջիններիս կողմից Հանձնաժողովին ներկայացրած տեղեկատվության, ձվի դեֆիցիտի և իրացման գների կտրուկ ավելացման օրերին, ձու արտադրողների մոտ պահեստավորված է եղել մեծ քանակի ձու, որի գերակշիռ մասը պատկանել է «ԼՏԹՖ» ընկերությանը: Դեկտեմբերի վերջին շաբաթվա ընթացքում, երբ խանութներում առկա է եղել ձվի չբավարարված պահանջարկ, «ԼՏԹՖ» ընկերությունը իր արտադրանքի մի մասը խանութներ չի առաքել, այսինքն չի իրացրել արտադրված ձվի ամբողջ քանակը, ինչն էլ նպաստել է դեֆիցիտի առաջացմանը: Արձանագրվածը հաստատվել է նաև խոշոր սուպերմարկետների կողմից Հանձնաժողովին ներկայացրած գրավոր տեղեկատվությամբ: Հանձնաժողովը նման խախտումը որակել է որպես գերիշխող դիրքի չարաշահում և «ԼՏԹՖ» ընկերության նկատմամբ նշանակվել է տուգանք՝ ընկերության 2009 թվականի հասույթի երկու տոկոսի չափով, որը կազմել է մոտ 100 միլիոն դրամ:

Յորենի, այլուրի, կարագի, կաթնամթերքի, շաքարավազի, բուսական յուղի և այլ ապրանքային շուկաներում Հանձնաժողովի կողմից տարվա ընթացքում մշտական ուշադրությունը թույլ է տվել որոշակիորեն զսպել գների արհեստական բարձրացման միտումները:

Մրցակցության զարգացման համար կարևոր հիմնախնդիր է նոր տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու համար հավասար պայմանների ստեղծումը: Թեկուզև, Հայաստանի Հանրապետության ապրանքային շուկաներում նվազեցվել են մուտքի վարչական և այլ տիպի խոչընդոտները, սակայն որոշ շուկաներում խոչընդոտները ստեղծվում են այդ շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից:

Այսպես, «Յուքոմ» ընկերությունը դիմել էր Հանձնաժողով՝ հայտնելով, որ «ԱրմենՏել» ընկերությունն իր բջջային ցանցից դեպի «Յուքոմ» ընկերության ֆիքսված ցանց զանգերի համար սակագինը սահմանել է 99 դրամ բոլոր սակագնային պլանների դեպքում, մինչդեռ «ԱրմենՏել» ընկերության բջջային ցանցից «ԱրմենՏել» ընկերության ֆիքսված ցանց սակագինը սահմանվել էր համապատասխանաբար՝ 29,99 դրամ, 39 դրամ և 59 դրամ, կախված սակագնային պլանից: Վերջինս առաջացնում էր «Յուքոմ» ընկերության գործող և պոտենցիալ բաժանորդների արդարացված դժգոհությունը և խոչընդոտում էր շուկայում առողջ մրցակցային մթնոլորտի ձևավորմանը՝ անուղղակիորեն ստիպելով բաժանորդներին հրաժարվել ընկերության կողմից առաջարկվող ծառայություններից: Հարկ է նշել, որ Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի իրականացման ընթացքում՝ մինչև Հանձնաժողովի կողմից որոշում կայացնելը «ԱրմենՏել» ընկերության կողմից խախտումը մասամբ վերացվել էր:

«Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող «ԱրմենՏել» ընկերության կողմից Ընկերության բջջային ցանցից «Յուքոմ» ֆիքսված ցանց զանգահարելու համար 99 դրամ սակագնի սահմանումը և կիրառումը Հանձնաժողովի կողմից որակվել է որպես գերիշխող դիրքի չարաշահում: Գերիշխող դիրքի չարաշահման համար «ԱրմենՏել» ընկերությանը տրվել է նախազգուշացում և խախտումները հետագայում բացառելու հանձնարարություն:

Նշված որոշումը Հանձնաժողովը կայացրել է նրանից հետո, երբ «ԱրմենՏել» ընկերությունը միջնորդությամբ դիմել է Հանձնաժողովին և տեղեկացրել, որ նախորդ որոշումներով ամրագրված խախտումներն ամբողջովին վերացվել են, ինչը նշանակում է, որ ընկերությունն ըստ էության ընդունում է այն փաստը, որ իրավախախտում է կատարել: Հանձնաժողովի կողմից «ԱրմենՏելի» նկատմամբ տուգանք սահմանող նախորդ 2 որոշումներն էլ, որոնցից մեկը կայացվել է գերիշխող դիրքի չարաշահման, իսկ մյուսը՝ անբարեխիղճ մրցակցության համար, վիճարկվել են դատական կարգով: Սակայն ընկերությունը տեղեկացրել է, որ հրաժարվում է բոլոր դատական հայցերից և պատրաստակամ է վճարելու տուգանքները: Ի դեպ, անբարեխիղճ մրցակցության վերաբերյալ Հանձնաժողովի կայացրած որոշումը Վարչական դատարանը թողել է անփոփոխ՝ այն համարելով հիմնավոր և իրավաչափ: Այսպիսով, Հանձնաժողովի 2 որոշումներով «ԱրմենՏել» ընկերությունը պետական բյուջե կվճարի 100 միլիոն դրամ գերիշխող դիրքի չարաշահման և 500 հազար դրամ՝ անբարեխիղճ մրցակցության համար:

Նշենք, որ անբարեխիղճ մրցակցության վերաբերյալ տուգանքը կիրառվել է նախորդ տարի՝ «Hi-Line» ծառայության վերաբերյալ գովազդվող տեղեկատվության և ծառայության տրամադրման իրական պայմանների միջև ակնհայտ անհամապատասխանության հետևանքով: Իր գործունեության ընթացքում Հանձնաժողովը տարբեր իրավախախտումների համար բազմիցս անդրադարձել է «ԱրմենՏել» ընկերության վարքագծին և կիրառել պատասխանատվության միջոցներ: Սակայն ակնհայտ է, որ շնորհիվ Հանձնաժողովի, ընկերությունը էականորեն փոխել է իր վարքագիծը շուկայում:

Մեկ այլ հիմնախնդիր, որը Հանձնաժողովի կարևոր գործառույթներից է, դա սպառողների շահերի պաշտպանությունն է և առաջին հերթին, այն դեպքում, երբ մենաշնորհ դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից ծառայությունները տրամադրվում են ոչ բավարար, կամ ոչ սահմանված ժամկետում՝ ստեղծելով սպառողների համար արհեստական խոչընդոտներ:

Մասնավորապես, քաղաք Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական և Բագրևանդ փողոցների միջանկյալ տարածքում գտնվող մի շարք բնակելի տների սեփականատերեր դիմել էին Հանձնաժողով իրենց շահերի պաշտպանության համար:

Դիմումում նշված էր, որ իրենց տարածքը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը չի ապահովում էներգամատակարարմամբ, չնայած այն փաստին, որ նշված տարածքում 2008-2009 թվականներին ընկերության կողմից ամբողջովին կառուցվել և ավարտվել է ենթակայանի շենքը, շենքի ներսում տեղակայվել են լիովին նոր սարքավորումներ: Սակայն հետագայում, երկու տարվա ընթացքում փաստացի կառուցված ենթակայանի շահագործման ընդունման համար որևէ քայլ կատարված չէր:

Դիմումի հիման վրա Հանձնաժողովը հարուցեց վարչական վարույթ, որի արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց, որ ընկերությունը, ունենալով մենաշնորհ դիրք «Բաշխիչ ցանցերով էլեկտրական էներգիայի մատակարարում» ապրանքային շուկայում, չի կատարել իր պարտականությունը՝ դիմումատուներին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չապահովելով էլեկտրական էներգիայով:

«Բաշխիչ ցանցերով էլեկտրական էներգիայի մատակարարում» ապրանքային շուկայում մենաշնորհ դիրք ունեցող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության վարքագիծը Հանձնաժողովը որակել է, որպես գերիշխող դիրքի չարաշահում: Ընկերության նկատմամբ, որը մինչև Հանձնաժողովի որոշում կայացնելը շտկել էր խախտումը՝ կատարելով սպառողների նկատմամբ իր պարտականությունները նշանակվեց որպես պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում: Նշված որոշմանը նպաստեց այն փաստը, որ սպառողների իրավունքները լիովին վերականգնված էին, և, բացի այդ, Հանձնաժողովը իր գործունեության ընթացքում առաջին անգամ էր վարչական վարույթ հարուցում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության նկատմամբ, միաժամանակ, ընկերությանը հանձնարարվեց հետագայում բացառել նման խախտումները:

Տնտեսական համակենտրոնացման պետական կարգավորումը հանդիսանում է տնտեսության մենաշնորհացման կանխման կարևոր գործիքներից՝ ուղղված տնտեսության կայունության ապահովմանը և մրցակցության զարգացմանը: Ուստի, համակենտրոնացման վերահսկման գործառույթը հանդիսանում է մրցակցային քաղաքականության կարևոր ուղղությունը: Համակենտրոնացման պետական վերահսկողությունը միտված է մրցակցային միջավայրի վատթարացման արգելմանը և գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման կանխարգելմանը և բացառմանը: Այդ

պատճառով էլ միացումների և կլանումների առավել խոշոր գործարքներն իրականացվում են Հանձնաժողովից թույլտվություն ստանալու դեպքում: Համակենտրոնացման դեպքերի ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովի կողմից 2011 թվականին հարուցվել է 24 վարչական վարույթ:

Սպառողների օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից ոչ պակաս կարևոր հիմնախնդիրներից է հանդիսանում անբարեխիղճ մրցակցության բացահայտումը և դադարեցումը: Հանձնաժողովը շարունակում է աշխատանքներ իրականացրել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառման ուղղությամբ:

Օրենքի խախտման երևույթները հայտնաբերվել են մասնավորապես օդու, կաթնամթերքի, կարագի, հավի մսի, հավի ձվի, սուրճի, զովագուցիչ ըմպելիքների, երշիկեղենի, ինտերնետ ծառայության, կենցաղային ապրանքների և այլ ոլորտներում: Օրենքի վերը նշված խախտման դեպքերը վերաբերում են տնտեսվարող սուբյեկտի կողմից գրանցված կամ չգրանցված ապրանքային և սպասարկման նշանների նկատմամբ շփոթության առաջացմանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից ապրանքների գովազդման ընթացքում որակի և այլ բնութագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության չհիշատակման, ապրանքի բնութագրերի (արտադրության տարեթիվ, ամիս, օր և այլն) վերաբերյալ համապատասխան տեղեկատվության չհիշատակման, ապրանքի արտաքին տեսքի, օրինակ՝ գրանցված կամ չգրանցված արդյունաբերական նմուշի, ապրանքի փաթեթավորման, գույնի կամ այլ ոչ ֆունկցիոնալ բնութագրերի նկատմամբ հասարակության մոլորեցմանը: Տնտեսվարող սուբյեկտների կողմից նման վարքագիծը որակվել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Հանձնաժողովի որոշմամբ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ նշանակվել է պատասխանատվության միջոց, ինչպես նաև տուգանված ընկերություններին պարտավորեցվել է հանել նշված արտադրատեսակները շրջանառությունից և հետագայում բացառել օրենքի խախտումը: Հանձնաժողովն ուսումնասիրությունների արդյունքները տրամադրել է նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը: Միաժամանակ հարկ է նշել, որ Հանձնաժողովի մոտեցումները անբարեխիղճ մրցակցության դրսևորումների

նկատմամբ կրում են համալիր բնույթ և գրեթե ամբողջովին ընդգրկում են հնարավոր խախտման ոլորտը:

2010 թվականից մեծապես ակտիվացել են աշխատանքները մրցակցային օրենքի խախտումների դեմ պայքարի ուղղությամբ: Մասնավորապես, եթե 2008 և 2009 թվականներին Հանձնաժողովը կայացրել էր տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու 31-ական որոշումներ, ապա 2010 թվականին այդ ցուցանիշը կազմել է 107 որոշում, իսկ 2011 թվականի առաջին ինն ամիսների տվյալներով՝ 86 որոշում: Ինչ վերաբերում է կիրառված ֆինանսական տուգանքների բացարձակ մեծություններին, ապա միայն 2011 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում տնտեսվարող սուբյեկտները հակամրցակցային գործողությունների համար տուգանվել են մոտ 227 միլիոն դրամի չափով, 2010-ի 37 միլիոնի, 2009-ի 10 միլիոնի և 2008-ի 9 միլիոնի համեմատ: Հարկ է նկատել, որ, ի տարբերություն նախորդ տարիների, Հանձնաժողովը 2010 և 2011 թվականներին կայացված և դատական կարգով բողոքարկված որոշումներից և ոչ մեկը վերջնական դատական ակտով անվավեր չի ճանաչվել, ինչը խոսում է կայացված որոշումների հիմնավորվածության, հետևաբար նաև Հանձնաժողովի գործունեության արդյունավետության մասին: Մասնավորապես, 2010 թվականին բողոքարկվել է Հանձնաժողովը թվով 34 որոշում, որոնցից 22-ով առկա Հանձնաժողովի օգտին կայացված դատական ակտ, իսկ 2011 թվականին բողոքարկվել է Հանձնաժողովի թվով 19 որոշում, որոնցից 8-ով դատարանը վճիռ է կայացրել Հանձնաժողովի օգտին, մնացած գործերով դատավարությունը շարունակվում է: Ներկայումս Հանձնաժողովում առկա են հարուցված և չավարտված թվով 2 վարչական վարույթներ գերիշխող դիրքի չարաշահման և թվով 40 վարչական վարույթներ անբարեխիղճ մրցակցության դրսևորումների վերաբերյալ: Հանձնաժողովը սկսել է ակտիվ ուսումնասիրություններ իրականացնել նաև պետական գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնությունների բացահայտման ուղղությամբ, որտեղ ևս առկա են բազմաթիվ չարաշահումներ, ինչի վերաբերյալ առաջիկայում կլինեն հրապարակային վարույթներ:

Վերը նշված բոլոր հիմնախնդիրների լուծման, օպերատիվ հայտնաբերման և կասեցման նպատակով բնականաբար դրական ազդեցություն է ունեցել 2011 թվականին Օրենքում կատարված փոփոխություններն ու լրացումները:

- Հստակեցվել և խստացվել են մրցակցային օրենսդրության խախտումների համար սահմանված տուգանքների չափերը՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին: Մասնավորապես, եթե գործող օրենքով գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության համար սահմանված տուգանքի չափը կազմում էր տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի 2 տոկոսի չափով, ապա փոփոխություններով այդ իրավախախտումների համար տուգանքի չափը կազմելու է հինգից երկու հարյուր միլիոն դրամ, ինչպես նաև գների չհիմնավորված բարձրացման հետևանքով ստացված շահույթը գանձվելու է ՀՀ պետական բյուջե: Անբարեխիղճ մրցակցության համար սահմանված տուգանքի չափը հինգ հարյուր հազար դրամի փոխարեն սահմանվել է տնտեսվարող սուբյեկտի իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև 1 տոկոսի չափով: Սահմանվել են նաև տուգանքների կոնկրետ չափերի որոշման համար հիմք ընդունվող սկզբունքները և չափանիշները:
- Ընդլայնվել են Հանձնաժողովի ապացուցողական կարողությունները՝ նախատեսելով դիտանցումներ և հսկիչ գնումներ կատարելու իրավասությունները:
- Վերացվել են օրենքում առկա բազմաթիվ սողանցքերը, հստակեցվել են հասկացությունները: Տնտեսվարող սուբյեկտների կողմից գնային չարաշահումների դեմ առավել արդյունավետ պայքար մղելու նպատակով օրենքում հստակ կարգավորում են ստացել գների չհիմնավորված բարձրացման, իջեցման և պահպանման հետ կապված հարաբերությունները: Օրենքում սահմանվել են գերիշխող դիրքի որոշման որակական չափանիշներ, որպիսի պայմաններում գերիշխող դիրք ունեցող են համարվում նաև շուկայում իրական ազդեցություն ունեցող այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք քանակական ցուցանիշներով գերիշխող դիրք ունեցող չէին համարվի և չարաշահումների համար պատասխանատվության չէին ենթարկվի: Օրենքից դուրս է եկել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների ռեեստրի վարման պարտականությունը: Օրենքում տեղ են գտել նաև գերիշխող դիրք

ունեցող տնտեսվարող սուբյեկտների լուծարման գործընթացի վերաբերյալ մի շարք դրույթներ, ինչով բացառվում է տնտեսվարող սուբյեկտների կողմից նախկինում հաճախ կիրառվող այն վարքագիծը, երբ գերիշխող դիրքի չարաշահում թույլ տված տնտեսվարող սուբյեկտը լուծարվում է, ինչի հետևանքով Հանձնաժողովը զրկվում էր այդ տնտեսվարող սուբյեկտի վարքագծին իրավական գնահատական տալու հնարավորությունից:

➤ Միաժամանակ, Օրենքի փոփոխություններով մի շարք դրույթներ են նախատեսվել, որոնք բարձրացնելու են Հանձնաժողովի գործունեության օպերատիվությունը, քանի որ գործող օրենքի պայմաններում Հանձնաժողովը հնարավորություն չունեի արագ արձագանքելու մրցակցության օրենսդրության խախտումներին: Հանձնաժողովին վերապահվել է զգուշացում տալու իրավասություն՝ որպես կանխարգելիչ գործառույթ:

➤ Հաշվի առնելով միջազգային փորձը և Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը՝ օրենքը լրացվել է առևտրային ցանցերին վերաբերող մի շարք դրույթներով, ինչն էլ հնարավորություն կտա կանխարգելել և բացահայտել խոշոր առևտրային ցանցերի կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումները:

Հաշվի առնելով միջազգային փորձը, օրենքի փոփոխություններում ներառվել են դրույթներ նաև առևտրային ցանցերի վերաբերյալ: Մասնավորապես, սահմանվել է առևտրային ցանցի հասկացությունը, առևտրային ցանցը գերիշխող դիրք ունեցող համարելու պայմանները, առևտրային ցանցի կողմից հնարավոր չարաշահումները և այլն, որոնք ուղղված են լինելու առևտրային ցանցերի կողմից մրցակցային օրենքի հնարավոր խախտումների դեմ պայքարին:

Հանձնաժողովը ընդունել է մի շարք նոր ենթաօրենսդրական ակտեր, ինչպես նաև վերամշակել է նախկինում ընդունվածները՝ համաձայնեցնելով դրանք գործող Օրենքի դրույթներին: Մասնավորապես, ընդունվել են ապրանքային շուկայի սահմանների որոշման, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման

հայտարարագրման, հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների տնօրինման, ապրանքային շուկայում տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի, այդ թվում՝ շուկայական իշխանության, մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ կարգեր, որոնք ապահովելու են Օրենքի կիրարկումը: Այդ ուղղությամբ աշխատանքները կշարունակվեն 2012 թվականին:

Այնուամենայնիվ, Օրենքի վերջին փոփոխություններում տեղ չգտան հետևյալ հարցերի վերաբերյալ դրույթները.

- Ստուգումների իրականացման ոլորտում Հանձնաժողովի իրավասությունների ընդլայնումը,

- Հանձնաժողովի ֆինանսական անկախության ապահովումը և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացումը:

Հիմք ընդունելով Հանձնաժողովի դիտարկումները տնտեսվարող սուբյեկտների չարաշահման առումով մեծապես կարևորվում է Հանձնաժողովի ստուգումների իրավասության ընդլայնումը, որը Հանձնաժողովին հնարավորություն կտա մուտք գործել տնտեսվարող սուբյեկտների բիզնես տարածքներ, ուսումնասիրել փաստաթղթերը, նյութերը, կրիչները, տնտեսվարող սուբյեկտների աշխատակիցներից վերցնել բացատրություններ ստուգման ենթակա հանգամանքների վերաբերյալ և այլն: Ըստ միջազգային փորձագետների ևս, ստուգումներ անցկացնելու լիազորությունը տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմիններում խիստ կարևոր է այս կամ այն տնտեսվարողի կողմից օրենքի հնարավոր խախտումների դեպքում ստուգումները կատարում է հենց մրցակցային մարմինը: Բացի այդ, մրցակցային մարմնի կողմից ստուգումների իրականացումը հնարավորություն կստեղծի նաև ակտիվորեն կիրարկել հանդուրժողականության սկզբունքը, այդպիսով նպաստելով հակամրցակցային համաձայնությունների բացահայտմանը: Մյուս կողմից Հանձնաժողովը շարունակում է իրականացնել իր իրավասությունների շրջանակներում հսկիչ գնումների միջոցով ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են մրցակցությանը խոչընդոտող գործողություններին կամ վարքագծին: Հսկիչ գնումները իրականացվում են հիմնվելով, ինչպես պարբերական մոնիտորինգի արդյունքների, այնպես էլ

Հանձնաժողովի նախաձեռնությամբ, դիմում բողոքների և այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա:

Մրցակցության քաղաքականության դերը միայն շուկայի մասնակիցների նկատմամբ մրցակցային օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման մեջ չէ: Հայաստանի Հանրապետության ապրանքային շուկաների ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ մրցակցության վրա ոչ պակաս ազդեցություն է թողնում պետական մարմինների գործողությունները, ինչպես նաև անգործությունը: Մասնավորապես տարբեր տիպի վարչական խոչընդոտների ստեղծումը, չհիմնավորված առավելությունների տրամադրումը և այլն:

Մրցակցության զարգացման և բարեխիղճ մրցակցային միջավայրի ստեղծման դանդաղեցնող մեկ այլ հիմնախնդիրը վերաբերում է պետական գնումների ոլորտին: Պետական գնումների և պետական օժանդակության տրամադրումը բավականին հաճախ խաչվում են, քանի որ երկուսն էլ իրականացվում են պետական մարմինների կողմից և երկուսի արդյունքում էլ կարող է տեղի ունենալ այս կամ այն տնտեսվարողին չհիմնավորված առավելությունների տրամադրում, որը մեծապես վնասում է մրցակցային միջավայրի ստեղծմանը: Նման տիպի հիմնախնդիրների Հանձնաժողովը հանդիպել է դեղորայքի շուկայում, որոնք պետությունը ձեռք է բերում պետական կարիքների համար: Մասնավորապես, նշված ոլորտում ուսումնասիրություններ են տարվում, ինչի համար Հանձնաժողովը պահանջել է մի շարք բժշկական կազմակերպություններից պետական գնումների գործընթացում դեղերի ձեռքբերման համապատասխան տեղեկություններ, որոնք կվերլուծվեն և խախտումների հայտնաբերման դեպքում կկիրառվեն համապատասխան միջոցներ: Նմանատիպ ուսումնասիրություններ պետական գնումների ոլորտում կատարվել են նաև բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման ոլորտում:

Պետական մարմինների կողմից մրցակցության օրենսդրությանը հակասող գործողությունների ժամանակին կանխումն անմիջական դրական ազդեցություն կունենա տարբեր ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի վրա: Ուստի, Հանձնաժողովի գործունեության կարևոր ուղղություններից է պետական մարմինների որոշումների վերահսկողության և մրցակցության օրենսդրությանը հակասող գործողությունների կանխումը: Դրա հետ մեկտեղ, պետական մարմինների

մրցակցությանը խոչընդոտող, սահմանափակող գործողությունների կանխման նպատակով Հանձնաժողովը 2012 թվականին նախատեսում է մշակել համակարգային և համալիր մոտեցումներ:

Ներկա պայմաններում Հանձնաժողովն արգելված պետական օժանդակությունները փորձում է բացահայտել առավելապես իր նախաձեռնությամբ՝ ուսումնասիրելով մի շարք պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի նախագծերը: Օրինակ, այսպես նշված խնդրի լուծման համար անհրաժեշտ է դիտանցման համապատասխան համակարգի և հստակ մեխանիզմների սահմանում՝ տրամադրվող օժանդակության առումով պարտադիր եզրակացություն ստանալու համար, որոշակի ոլորտներում պետական օժանդակության կիրարկման կանոնների շրջանակի սահմանում, պետական օժանդակության տեսակների դասակարգում, օժանդակություն տրամադրող կառույցների ցանկի հաստատում: Ի դեպ, պետական օժանդակությունը համեմատաբար նոր ինստիտուտ է տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում:

Նշված հարցի առնչությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մրցակցային միջավայրի զարգացման նպատակով շարունակվում է արդյունավետ համագործակցությունը բազմաթիվ միջազգային կառույցների հետ: Ներկայումս անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերի մշակման համար ակտիվ համագործակցություն է ընթանում Համաշխարհային բանկի, ԵՄ-ի հետ: Մրցակցային միջավայրի և Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով ներկայումս ԵՄ-ը աջակցություն է ցուցաբերում Հանձնաժողովին TWINNING գործիքի շրջանակներում: Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ պարբերաբար փորձագետներ են հրավիրվում Հանձնաժողովի կողմից հարուցված խնդրահարույց վարչական վարույթների կապակցությամբ խորհրդատվություն կազմակերպելու նպատակով:

Հայաստանի և Արցախի տնտեսական մրցակցության դաշտը կարգավորող պետական մարմինների միջև ստորագրված համագործակցության համաձայնագրի շրջանակներում շարունակվում է մրցակցության քաղաքականության, մասնավորապես ապրանքային շուկաների ուսումնասիրության, վարույթների

իրականացման բնագավառում փորձի փոխանակումն ու գործնականում առևտրի կետերում դիտանցումների իրականացումը՝ ապրանքային շուկաների ուսումնասիրության արդյունքների և ոլորտին առնչվող մի շարք այլ խնդիրների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովն աշխատանքներ է տարել մարզերում «մրցակցային մշակույթի» ձևավորման ուղղությամբ: Այդ տեսանկյունից Հանձնաժողովն ուղղել է իր գործողությունները Հայաստանի մարզերում Օրենքի դրույթների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, համապատասխան նպատակային խմբերին ուսուցանելու և իրազեկելու Հանձնաժողովի գործառույթների և իրավասությունների վերաբերյալ, բարձրացնելու մարզերում գործունեություն իրականացնող տնտեսվարողների ներգրավվածությունը տնտեսական մրցակցության պաշտպանության գործընթացին: Ներկա դրությամբ այդպիսի աշխատանքներ ադեն տարվել են Կոտայքի և Արմավիրի մարզերում: Հետևաբար, Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ներդնել նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնք մնում են Հանձնաժողովի համար առ այսօր արդիական և միևնույն ժամանակ՝ խնդրահարույց: Հանձնաժողովն իրականացնում է աշխատանքներ սպառողների շահերի պաշտպանության ոլորտում: Ուստի շարունակում է սերտ համագործակցել սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ: Արդյունքում ոչ միայն ապահովվում է սպառողների հետ հետադարձ կապ, այլ նաև ստանում է ազդակներ՝ կապված անորակ ապրանքների և ծառայությունների վերաբերյալ, որը նպաստում է սպառողների կողմից արձագանքման ակտիվացմանը և հասարակական վերահսկողությանը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության հետագա զարգացումը և հակամենաշնորհային հսկողության և կարգավորման աճող դերը ակտուալ են դարձնում մրցակցության քարոզչությանն ուղղված միջոցառումները: Մրցակցության քարոզչության տակ հասկացվում է այնպիսի պայմանների ստեղծումը, առաջին հերթին տեղեկատվական, որոնց դեպքում շուկայական ընթացքի բոլոր մասնակիցներին հասկանալի կլինի արդար և բարեխիղճ մրցակցության

պահանջների պահպանման անհրաժեշտությունը, մրցակցային մոտեցումների արդյունավետությունը, օրենսդրության դրույթների կատարման պարտադիրությունը:

Ծրագրի կարևոր բաղադրիչներից է հասարակության հետ կապերի նոր մակարդակի ձևավորման անհրաժեշտությունը: Այս տեսանկյունից Հանձնաժողովի խնդիրն է մրցակցության կանոնների իմացությունը և համարժեք ըմբռնումն ապահովելը, որոնք «մրցակցային մշակույթի» ձևավորման կարևոր նախապայմաններից են:

Հանձնաժողովը Ծրագրի խնդիրներից է համարում հասարակական խորհրդի աշխատանքների ակտիվացումը: Խորհրդի գործունեության նպատակներն են Հանձնաժողովին աջակցելը, տնտեսվարող սուբյեկտներին և հասարակությանը տնտեսական մրցակցության վերաբերյալ հարցերին մասնակից դարձնելը, մրցակցային միջավայրի զարգացմանը նպաստելը:

Ծրագրում նշված են այն միջոցառումները և մեխանիզմները, որոնք հիմնականում միտված են լինելու մրցակցային դաշտը կատարելագործող օրենսդրական փոփոխությունների կիրառմանը, ինստիտուցիոնալ զարգացումների խթանմանն ու տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, ֆինանսական ու մարդկային ռեսուրսներով համալրմանը:

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Հանձնաժողովը, հիմք ընդունելով սույն Ծրագրի առաջին գլխում ներկայացված տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և բացահայտված հիմնախնդիրները, ինչպես նաև՝ հաշվի առնելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակած փորձը, սահմանում է այն միջոցառումների ցանկը, որոնք ուղղված են մրցակցության պայմանների ապահովմանը, բարելավմանը և երկրի տնտեսական բնագավառի բարեփոխումների արդյունավետ ձևով խթանմանը: Վերոնշյալ միջոցառումները Հանձնաժողովը 2012 թվականին ծրագրում է իրականացնել տնտեսական մրցակցության քաղաքականության հետևյալ գերակա ուղղություններով.

➤ Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաների վերլուծությանն ուղղված աշխատանքներ

➤ Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում և հնարավոր չարաշահումների հայտնաբերում, դրանց առկայության դեպքում պատասխանատվության միջոցների կիրառում

➤ Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման նպատակով ուսումնասիրություն, գնահատում, օրենքի խախտման դեպքում՝ պատասխանատվության միջոցի կիրառում

➤ Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության իրականացում

➤ Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում

➤ Տնտեսական մրցակցության սահմանափակման, կանխման կամ Օրենքին հակասող պետական օժանդակության հայտնաբերում

➤ Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող ակտերի ուսումնասիրություն

➤ Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության կատարելագործմանն ուղղված աշխատանքների իրականացում,

- Քարոզչություն և հասարակության իրազեկվածության բարձրացում
- ՁԼՄ-երի հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին օպերատիվ արձագանքում, «Թեժ գծի» միջոցով ստացված բողոքներին արձագանքում
- Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում
- Միջազգային կառույցների հետ համագործակցություն

Նշված ուղղություններով գործողությունները Հանձնաժողովը ծրագրում է իրականացնել հետևյալ միջոցառումների միջոցով.

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Աղյուսակ 3

<<	Միջոցառում	Ժամկետ
1.	Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաների վերլուծությանն ուղղված աշխատանքներ	
	տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծություն՝ մասնավորապես կենտրոնացվածության աստիճանի որոշում, բնակչության կողմից սպառման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների ապրանքային շուկաներում,	յուրաքանչյուր եռամսյակ
	բարձր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի և ապրանքների գնագոյացման դիտանցում	տարվա ընթացքում
	ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների մուտքի խոչընդոտների բացահայտում	տարվա ընթացքում
	նախկինում ուսումնասիրված ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի շարունակական դիտանցում և գնահատում:	տարվա ընթացքում
2.	Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման նպատակով ուսումնասիրություն, գնահատում, օրենքի խախտման դեպքում՝ պատասխանատվության միջոցների կիրառում և դադարեցում	
	իրացման կամ ձեռքբերման խտրական գների հայտնաբերմանն ուղղված դիտանցում, գնահատում և վերլուծություն	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	ապրանքի գնի չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման բացահայտմանն ուղղված դիտանցում և գնահատում	
	միևնույն ապրանքային շուկայի որոշակի տարածքներում, որոշակի ծավալներով, տեսականիով, սպառողների կամ մատակարարների խմբերով ապրանքների շրջանառության սահմանափակման դեպքերի ուսումնասիրություն	
	համաձայնեցված գործողությունների արդյունքում տնտեսվարող սուբյեկտների կողմից շուկայի մուտքի խոչընդոտների կամ շուկայից տնտեսվարող սուբյեկտներին դուրս մղելու փաստերի և այլ գործողությունների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն	
	միևնույն ապրանք(ներ)ի համար անհավասար պայմաններ առաջարկման կամ կիրառման դեպքերի ուսումնասիրություն	
	պետական գնումների կամ մրցույթների կամ աճուրդների գործընթացում հակամրցակցային համաձայնությունների բացահայտում և կանխում	
	մինչև համաձայնություն կնքելը (կայացնելը) եզրակացություն տրամադրում	

3.	Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում՝ հնարավոր չարաշահումների հայտնաբերման, կանխման ու վերացման նպատակով	
	իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական գների սահմանման, կիրառման, կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրման դեպքերի հայտնաբերում, ուսումնասիրություն	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	առանձին գործընկերների նկատմամբ խտրական պայմանների, լրացուցիչ պարտավորությունների պարտադրման դեպքերի հայտնաբերում	
	գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից այլ գործողությունների բացահայտում, որոնք հանգեցնում են այլ տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելու խոչընդոտների (շուկա մուտք գործելը սահմանափակելու) կամ շուկայից նրան դուրս մղելուն:	
4.	Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն	
	տնտեսվարող սուբյեկտների միացումների կամ միաձուլումների, մեկ տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների կամ փայաբաժնի ձեռքբերման, ինչպես նաև մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի որոշումների կայացման կամ մրցունակության վրա ազդելու վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերում	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացումների բացահայտում	
	համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեթոդների կատարելագործում	
	հայտարարագրման ենթակա կամ տնտեսական մրցակցությունն էապես խոչընդոտող, այդ թվում՝ գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն ամրապնդող համակենտրոնացումների վերաբերյալ թույլատվության տրամադրում	
5.	Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման նպատակով գովազդի ոլորտում մշտական դիտանցում	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների դիմումների, ՋԼՄ –երի հրապարակումների հիման վրա ուսումնասիրությունների իրականացում	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման ուղղությամբ աշխատանքների, հսկիչ գնումների իրականացում	
6.	Տնտեսական մրցակցության սահմանափակման, կանխման կամ Օրենքին հակասող պետական օժանդակության հայտնաբերում	տարվա ընթացքում, Հանձնաժողովի նախաձեռնությամբ
7.	Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող ակտերի ուսումնասիրություն	
	պետական կառավարման մարմինների որոշումների նախագծերի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան եզրակացությունների տրամադրում	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող ակտերի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան եզրակացությունների տրամադրում	
	պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքին հակասող գործողությունների, մասնավորապես պետական գնումների ոլորտին առնչվող հարցերի ուսումնասիրություն	

8.	Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության դրույթների վերանայում, մասնավորապես, միջազգային համագործակցության շրջանակներում	
	Օրենսդրական դաշտի բարելավման վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացում	տարվա ընթացքում
	Օրենքի դրույթների կիրարկումն ապահովող համապատասխան նորմատիվային բազայի կատարելագործում	
	Եվրոպական և ԱՊՀ անդամ պետությունների մրցակցային օրենսդրության հետ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության ներդաշնակեցման գործողությունների իրականացում, համապատասխան համաձայնագրերի կնքում	
	աշխատակազմի և այլ շահագրգիռ խմբերի շրջանում սեմինարների, քննարկումների և հանդիպումների կազմակերպում	
9.	ԶԼՄ-երի հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին օպերատիվ արձագանքում, «թեժ գծի» միջոցով ստացված բողոքներին արձագանքում	տարվա ընթացքում
10.	Քարոզչություն և հասարակության տեղեկացվածության բարձրացում	
	զանգվածային լրատվության միջոցներով Հանձնաժողովի աշխատանքների պարբերական լուսաբանում	
	ինտերնետային ցանցում on-line ռեժիմով Հանձնաժողով ներկայացված դիմումներին և բողոքներին արձագանքում	
	հասարակության ներկայացուցիչների ներգրավում տնտեսական մրցակցության խթանման և հիմնախնդիրների լուծման գործընթացին	
	հատուկ սեմինարների կազմակերպում ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար	
	քարոզչությանն ուղղված տեսահոլովակների պատրաստում և դրանց հեռարձակման ապահովում	տարվա ընթացքում
	տեղեկագրերի, քարոզչական բուկլետների և բրոշյուրների հրատարակում	
	մրցակցության հիմնախնդիրների վերաբերյալ ՀՀ մարզերում համապատասխան շահագրգիռ կողմերի իրազեկվածության բարձրացում	
	հասարակական խորհրդի նիստերի անցկացում	
11.	Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	
	Ամբողջական տեղեկատվական բազայի ստեղծում	
	Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի բարելավում	տարվա ընթացքում

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով, ելնելով օրենսդրությամբ ամրագրված գործառույթներից, Ծրագիրն իրականացվում է մրցակցության կարգավորման հետևյալ մեխանիզմների կիրառմամբ.

1. Օրենքի խախտման վերաբերյալ ստացված դիմումներին, ահազանգերին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին օպերատիվ արձագանքում:
2. Ամենօրյա շարունակական դիտանցում և դրանց արդյունքների վերլուծություն:
3. Օրենքի խախտումների հայտնաբերման նպատակով ստուգումների և հսկիչ գնումների իրականացում:
4. Պատասխանատվության միջոցների մեղմման սկզբունքի կիրարկում և դրա համար անհրաժեշտ պայմանների ապահովում:
5. Օրենքի խախտումների կանխարգելման նպատակով զգուշացում:
6. Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ մշտական հսկողության իրականացում:
7. Հասարակական խորհրդի նիստերի անցկացում:
8. Օրենքի դրույթների արդյունավետ կիրարկումն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերի կատարելագործում և մշակում:
9. Իրավական ակտերի ուսումնասիրություն և մրցակցության խոչընդոտների վերացում:
10. Հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովում, այդ թվում, պաշտոնական ինտերնետային կայքի թարմացում և ՋԼՄ-ներին օպերատիվ տեղեկատվության տրամադրում:
11. Հասարակության իրազեկվածության բարձրացում, այդ թվում՝ տեղեկագրերի հրապարակման, սեմինարների և կլոր սեղանների կազմակերպման միջոցով Օրենքի դրույթների, դրանց խախտման հետևանքների, Հանձնաժողովի իրավասությունների և գործառույթների, ինչպես նաև խախտված իրավունքների վերականգնման հնարավորության վերաբերյալ տեղեկացում:
12. Համագործակցություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

III. 1. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ

Մրցակցային քաղաքականության կիրարկումը միայն մրցակցային մարմինների գործառույթներով չեն կարող սահմանափակվել: Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված միջոցառումները բազմաբովանդակ են և առնչվում են պետական այլ մարմինների իրավասությունների հետ, ուստի, արդյունավետ մրցակցային քաղաքականության կիրարկման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում խթանել համագործակցությունը շահագրգիռ գերատեսչությունների հետ:

Այդ տեսանկյունից կարևորվում է Հանձնաժողովի համագործակցությունն օրենսդիր, գործադիր և դատական համակարգի կառույցների հետ: Միաժամանակ, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու և մրցակցության քաղաքականության կիրարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հանձնաժողովն, արդեն իսկ, առանձնահատուկ խնդիրների կարգավորման համար ստորագրել է համագործակցության մի շարք փաստաթղթեր ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ: Սակայն, դեռևս առկա են որոշակի խնդիրներ, որոնք լուծելու համար անհրաժեշտ է ապահովել մրցակցային հիմնախնդիրների նկատմամբ միասնական մոտեցում, ընդլայնել համագործակցության շրջանակը և սահմանել դրանց իրականացման հստակ մեխանիզմները:

Մասնավորապես, հասարակական խորհրդի գործունեության նպատակներն են Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին աջակցելը, տնտեսվարող սուբյեկտներին և հասարակությանը տնտեսական մրցակցության վերաբերյալ հարցերին մասնակից դարձնելը, մրցակցային միջավայրի զարգացմանը նպաստելը: Հասարակական խորհուրդը ստեղծվել է նախորդ տարվա վերջին և կայացրել է մեկ նիստ: Խորհրդի գործունեությունը կարևորվում է նաև այն փաստով, որ խորհրդի նիստերին, բացի խորհրդի անդամներից, կարող են մասնակցել հրավիրված պետական պաշտոնյաներ, փորձագետներ, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների, շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ,

այլ անձինք, ինչը նպաստելու է հասարակության տեղեկացվածության բարձրացմանը մրցակցության միջավայրի բարելավմանն առնչվող հարցերում:

Տնտեսական մրցակցության քաղաքականության մշակման և արդյունավետ իրականացման գործում հիմնական խոչընդոտներից են հանդիսանում տնտեսական մրցակցության միասնական քաղաքականության ծրագրային մոտեցումների և համապարփակ փաստաթղթերի բացակայությունը: Այս առումով Հանձնաժողովի ռազմավարությունը նպատակաուղղվելու է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համագործակցության ընդլայնմանը՝ նպաստելով մրցակցային քաղաքականության ձևավորման գործընթացին, ինչպես նաև մրցակցային օրենսդրության բարեփոխումներին:

Հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի միջև ստորագրված համագործակցության համաձայնագրի հիման վրա ստեղծվել է աշխատանքային խումբ՝ համապատասխան ընթացակարգեր մշակելու նպատակով, որոնք պետք է հնարավորություն ընձեռեն բացահայտել երկու մարմիններին ֆինանսական շուկաների ոլորտում մրցակցային կանոնները խախտողներին, այդ թվում համակենտրոնացումների արդյունավետ վերահսկման նպատակով ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն արժեթղթերով կատարվող գործարքների և այդ գործարքը կատարած անձանց վերաբերյալ:

Հանձնաժողովը և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը կնքել են փոխհամագործակցության հուշագիր, որի խնդրո առարկան է փորձի և տեղեկատվության փոխանակումը, հատկապես՝ էլեկտրոնային հաղորդակցությանն առնչվող հարցերի շուրջ տեխնոլոգիական (տեխնիկական) և մրցակցության ապահովմանն առնչվող հարցերի վերաբերյալ երկկողմ աջակցություն տրամադրելու առումով: Համագործակցության ընդլայնումը կնպաստի ուսումնասիրվող գործերի համար ոչ նպաստավոր նախադեպերի առաջացումը կանխելուն և հնարավորություն կստեղծի մինչև վերջնական որոշում կայացնելը քննարկումներ կազմակերպել:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տնտեսվարող սուբյեկտների գործունեության վերաբերյալ տվյալներ է տրամադրում

Հանձնաժողովին, որոնք մեծ նշանակություն ունեն Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթների և ուսումնասիրությունների համար:

Հանձնաժողովը շարունակելու է համագործակցել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ, իրականացնելով իրենց կողմից հայտնաբերված խախտումների վերացմանն ուղղված համատեղ աշխատանքները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

Պետական գնումների բնագավառում բարեփոխումների համալիր ծրագրերի իրագործմանը նպաստելու, մասնավորապես՝ հակամրցակցային համաձայնությունների բացահայտման ու կանխարգելման համակարգի ներդրման և պետական գնումների գործընթացի կազմակերպման ժամանակ մրցակցային սկզբունքների կիրառման համար, Հանձնաժողովը համագործակցում է ՀՀ ֆինանսների նախարարության հետ: Այս առումով, կարևորվում է պետական գնումների բնագավառում համաձայնեցված գործողություններին առնչվող ռիսկերի նվազեցումը:

Գործունեության ընթացքում առաջանում են բազմաթիվ խնդիրներ, որոնք Հանձնաժողովի կիրարկման դաշտից ուղղակիորեն դուրս են, և հաճախ անհրաժեշտություն է առաջանում պետական այլ պատասխանատու մարմինների հետ համատեղ լուծումներ գտնել:

Այս առումով, Հանձնաժողովի գործունեության բաղկացուցիչ մասն է կազմում պետական այլ մարմինների և գործարար հանրության շրջանում մրցակցության օրենսդրության հանդեպ ունեցած պատասխանատվության գիտակցման ամրապնդման, իրավախախտումները կանխարգելող միջոցառումների իրագործման և հնարավոր բոլոր օղակներում մրցակցային միջավայրի հիմնախնդիրներին համալիր լուծումներ տալու նախաձեռնությունների խնդիրը: Այդ պատճառով էլ պետական օժանդակության տրամադրման արդյունքում մրցակցային միջավայրի վրա հնարավոր ազդեցության գնահատման համար Հանձնաժողովը համագործակցելու է ՀՀ կառավարության և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Մրցակցային քաղաքականության զարգացման գործընթացում կարևոր դեր ունի դատական համակարգը: Մրցակցային մարմնի անկախության և հեղինակության մակարդակի վրա անմիջական ազդեցություն են թողնում դատարանների կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում քննվող գործերով կայացվող վճիռները: Տնտեսական մրցակցության բնագավառի գործեր քննող դատավորների ոչ բավարար փորձն ու մասնագիտացումը և գործերի քննության ժամկետների ձգձգումները հաճախ լուրջ խնդիրներ են առաջ բերում, այդ թվում՝ Հանձնաժողովի համար զգալիորեն նվազեցնելով վերջինիս գործունեության արդյունավետությունը և մարմնի նկատմամբ վստահությունը:

Իրավական որոշակի ընթացակարգերով առաջնորդվելուց բացի կարևորվում է, որ դատավորները կարողանան համարժեք կերպով ընկալել մրցակցային օրենսդրության գաղափարը, կարողանան խորապես հասկանալ տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված քննվող գործերի էությունը և տնտեսական վերլուծության մոտեցումները: Ներկա խնդիրներից է նաև Հանձնաժողովի համապատասխան որոշումների կատարումն ապահովելու համար դատարան ներկայացված հայցադիմումների հիման վրա քննվող գործերի տևականությունը:

Դատական համակարգի բարեփոխումների գործընթացում այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում ներգրավել մասնագիտացված դատավորներին ու դատական ծառայողներին և բարձրացնել նրանց հետագա կարողությունների և տեղեկացվածության աստիճանը՝ օտարերկրյա պետություններում մրցակցային գործերի քննության կարգի և ձևավորված պրակտիկայի ուսումնասիրման միջոցով: Խնդիրների լուծման լավագույն ուղին քննարկումների և սեմինարների կազմակերպումն է, ինչպես նաև միջազգային և տեղական փորձագիտական ներուժի արդյունավետ օգտագործումը:

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ

Հանձնաժողովի գործունեության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը և միջազգային համագործակցությունը: Շարունակվելու է համագործակցությունն այլ երկրների մրցակցային կամ հակամենաշնորհային մարմինների, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ՝ Հանձնաժողովի մասնագետների վերապատրաստման, նոր կադրերով համալրման, գործերի ուսումնասիրության ընթացքում փորձագետների ներգրավման, փորձի և տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև տեխնիկական վերազննման և տվյալների բազայի հասանելիության ապահովման նպատակով:

Հանձնաժողովն նախաստեսում է ակտիվորեն մասնակցել նաև միջազգային համաժողովներին, սեմինարներին, ամրապնդել այլ երկրների համանման կառույցների հետ համագործակցությունը՝ մրցակցության զարգացմանը խոչընդոտող արդի խնդիրների քննարկման և միջազգային չափորոշիչներին համապատասխան մոտեցումներ որդեգրելու նպատակով:

Հանձնաժողովը նպաստելու է Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ միջազգային պայմանագրերով սահմանված, տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարման արդյունավետության բարձրացմանը և անհրաժեշտ պայմանների ստեղծմանը՝ տնտեսական համագործակցության զարգացման և Եվրոպական Միության ու շահագրգիռ գործընկերների միջև տնտեսական ինտեգրման խորացման համար:

Տարվա ընթացքում միջազգային գործունեությունը և համագործակցությունը նպատակաուղղվելու են Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO), ՀՀ-ԵՄ Գործընկերության ու համագործակցության համաձայնագրի (ENP), Արևելյան Գործընկերության շրջանակում մրցակցային բնագավառին առնչվող փոխադարձ պարտավորությունների կատարմանը և նոր ստեղծված կապերի ամրապնդմանը:

Երկկողմանի համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը աշխատանքներ է իրականացնում և նախատեսում է ստորագրել համագործակցության համաձայնագիր Ֆրանսիայի մրցակցության մարմնի հետ:

Բազմակողմ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը շարունակելու է մասնակցել Միջազգային մրցակցության ցանց (ՄՄՑ/ICN), ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (ՀՔՄԽ/MCAP), Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (OECD) և ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (ՄԱԱԶՀ/UNCTAD) տարեկան նիստերին և հանդիպումներին, ինչպես նաև աշխատանքային խմբերի ընթացիկ աշխատանքներին:

Հանձնաժողովը, տարեկան գործունեության միջոցառումների իրագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակելու է համագործակցության նոր ծրագրեր և հստակեցնելու է տեխնիկական աջակցության այն ծրագրային ուղղությունները, որոնք արդեն իսկ իրագործման փուլում են: Մասնավորապես՝

- Թվինինգ ծրագրային գործիքի կիրառման ներքո 2012 թվականներին շարունակելու է իրականացնել «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» ծրագիրը, ինչը կնպաստի հարաբերություններ հաստատել ԵՄ անդամ երկրների՝ Գերմանիայի Դաշնության և Լիտվայի Հանրապետության մրցակցային մարմինների հետ: Համագործակցությունը շարունակվելու է նաև մրցակցության պաշտպանության քաղաքականության կիրարկման քարոզչությանն ուղղված միջոցառումների, աշխատակազմի կարողությունների զարգացման և կառույցի առավել թափանցիկ գործունեության խթանման ուղղությամբ, ինչպես նաև՝ հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության և վերջինիս կիրարկման մեխանիզմների կատարելագործմանը՝ ԵՄ չափանիշներին համահունչ:

- Երկրի գործընկերության ռազմավարության շրջանակներում տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրային ուղղություններից ելնելով՝ Հանձնաժողովը նախատեսում է Համաշխարհային բանկի (ՀԲ/ՄԲ) հետ իրագործել համատեղ ծրագիր՝ նպաստելու օրենսդրական բարեփոխումներին և խթանելու Հանձնաժողովի

աշխատակազմի կարողությունների բարելավմանը և բարձրացնելու հանրության իրազեկվածությունը:

- Հանձնաժողովը ծրագրային տարում նախատեսում է շարունակել համագործակցությունը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության հետ (ԵԱՀԿ/OSCE)՝ փոխըմբռնման և համագործակցության հուշագրի շրջանակներում, ինչը կնպաստի Հանձնաժողովի միջազգային հեղինակության բարձրացմանը՝ Հայաստանի Հանրապետությունում մրցակցային մշակույթի ձևավորման և մրցակցության կարգավորման գործընթացին համընթաց:

- Հանձնաժողովը Գերմանիայի միջազգային համագործակցության (ԳՄՀ/GIZ) ընկերության հետ՝ «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի ներքո, ընդլայնելու է համագործակցությունը մրցակցության քաղաքականության կիրարկման բարելավմանն ուղղված համատեղ գործողությունների ծրագիր իրականացնելու առումով, որի հիմնական ուղղություններն են՝ գործերի վարման շուրջ միջազգային փորձագետի խորհրդատվություն, Հայաստանի Հանրապետությունում մրցակցության քաղաքականության մասին տեղեկացվածության բարձրացում, ոլորտային կարգավորողների միջև համագործակցության համապատասխանեցում Եվրամիության չափանիշներին, Հանձնաժողովի աշխատակիցների համար դասընթացների կազմակերպում, ինչպես նաև Գերմանիայի Դաշնության կարտելային գրասենյակի (Բունդեսկարտելամտ) մասնագետների միջև փորձի փոխանակումը:

- Ծրագրային տարում, հաշվի առնելով նախորդ տարիների Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ/USAID) հետ համագործակցության դրական արդյունքները և ձեռքբերումները, Հանձնաժողովը ներկա փուլի հիմնախնդիրներից ելնելով և առաջացող նոր խնդիրներին միջազգային չափանիշներին համապատասխան լուծումներ տալու նպատակով, առաջիկա տարիների համար նախատեսում է մշակել և իրագործել ինստիտուցիոնալ զարգացման նոր համատեղ ծրագիր: Մասնավորապես, ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում մշակված տեղեկատվական տվյալների բազաների հայեցակարգի ստեղծման և իրագործման համար: